Հավելված 7
«ԳԲԿ-ԳՀԱՊԶԲ-18/5»* **ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳԲԿ-ԳՀԱՊԶԲ-18/5-3

ք. Գավառ «13»02 2018 թ.

<<Գավառի ԲԿ>>ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1483648 /մեկ միլիոն չորս հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և **անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Եթե մեկ տարվա ընթացքում համապատասխան ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,ապա պայմանագիրն դառնում է առոչինչ:.**

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի մասով միասնական պայմանագիր կնքելու դեպքում կգործի ՀՀ առողջապահության նախարարության կողմից կնքած պայմանագիրը

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[4]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք.Գավառ, Ազատության 21	ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2
<<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/6	Հ/Հ 1570005065330100
Հ/Հ 220085140329000,ՀՎՀՀ 08417304	ՀՎՀՀ 01222567
Էլ.փոստ:gavaribk@mail.ru	էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Տնօրեն՝ Ա.Կարապետյան	Հեռ. (011)720620
	Գլխավոր տնօրեն Ա. Ասատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

ավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը		չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
				միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)					հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	33661157/303	ատրոպին ս-տ 0,1% 1,0	Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, 61013, ք. Խարկով, Շևչենկո փ., 22՝ Փորձարարական Գործարան, Ուկրաինա	ատրոպին (ատրոպինի սուլֆատ)atropine (atropine sulfate)	լուծույթ ներերկման, 1մգ/մլ, 1մլ ամպուլներ	սրվ	54	10800	200	ք. Գավառ Ազատության 21	200	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
2	33661158/303	ադրենալին հիդրոքլորիդ 1,82մգ/մլ ,1մլ ամպուլներ	Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ (Շևչենկո փ., 22, ք. Խարկով) Ուկրաինա	էպինեֆրին (էպինեֆրինի հիդրոտարտրատ) epinephrine (epinephrine hydrotartrate)	լուծույթ ներարկման, 1,82մգ/մլ, 1մլ ամպուլներ 1մլ ամպուլներ	սրվ	127	31750	250	ք. Գավառ Ազատության 21	250	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
3	33661159	մեզատոն 10մգ/մլ , 1մլ ամպուլներ	Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, Շևչենկո փ., 22, ք. Խարկով Ուկրաինա	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) phenylephrine (phenylephrine hydrochloride)	լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլներ	ամպ	77	3850	50	ք. Գավառ Ազատության 21	50	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում

6	33671126	բ ր ո մ հ ե ք ս ի ն 8մգ	"Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ) bromhexine (bromhexine hydrochloride)	դեղահատեր 8մգ	հաբ	2,79	3069	1100	ք. Գավառ Ազատության 21	1100	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
7	33671130	դ ի մ ե դ ր ո լ 1% 1,0	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստան	դիֆենհիդրամին (դիֆենհիդրամին ի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydramine hydrochloride)	լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլներ	սրվ	21,7	130200	6000	ք. Գավառ Ազատության 21	6000	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
11	33691144	ն ատր ի ու մ ի թ ի ո ս ու լ ֆատ 30% 5.0	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստան	նատրիումի թիոսուլֆատ sodium thiosulfate	լուծույթ ն/ե ներարկման 300մգ/մլ, 5մլ ամպուլներ	սրվ	43,55	8710	200	ք. Գավառ Ազատության 21	200	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
12	33691145	մ ագ ն ե զ ի ու մ ի ս ու լ ֆատ 25% 5,0	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստան	մագնեզիումի սուլֆատ magnesium sulfate	լուծույթ ներարկման 250մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)	սրվ	31,05	49680	1600	ք. Գավառ Ազատության 21	1600	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
15	33691188	Մ ե ք ս ի պր ի մ 50մ գ /մ լ 2.0	ԴՊՈՒՀ Մոսկվայի Էնդոկրին Գործարան, 25, Նովոխոխլովկայա փ., Մոսկվա, 109052 Ռուսաստան	էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ ethylmethylhydroxy pyridine succinate	լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլներ (10/2x5/)	սրվ	230	368000	1600	ք. Գավառ Ազատության 21	1600	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
16	33691199	կ ար ս ի լ 22,5մգ	Սոֆարմա ԲԸ, փ. Իլիենսկո շոսե 16, 1220 Սոֆիա, Բուլղարիա	սիլիմարին silymarin	դեղահատեր թաղանթապատ 22,5մգ	հաբ	16,55	13240	800	ք. Գավառ Ազատության 21	800	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
20	33691213	լ ի ն ե ք ս	Լեկ Ֆարմայութիք ալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ	դեղապատիճներ կոշտ 1,2x10^7,	կապս	44	176000	4000	ք. Գավառ Ազատության 21	4000	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում

			Լյուբլյանա՝ բաց թողնման հսկող, Լեկ Ֆարմայութիք ալս դ.դ., Կոլոդվորսկա փ. 27, Մենգես, 1234, Սլովենիա՝ դեղաձևն արտադրող, փաթեթավորող Սլովենիա	(Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium) lyophilized viable lactic acid bacterias (Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium)	ապակե տարայում							
22	33691221	ադենոզինեոֆոսֆատ նատրիում 1% 1 մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստան	ադենոզինեոֆոսֆատ նատրիում 1% 1 մլ	լուծույթ նորարկման 10մգ/մլ, 1մլ	սրվ	24,91	19928	800	ք. Գավառ Ազատության 21	800	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
26	33691176/302	Նազիլոք Բյեբի քթակաթիլներ 0.01% 5մլ	Արսանիտ ՍՊԸ, Երևանյան փ. 110, Մասիս՝ բաց թողնման հսկող, երկրորդային փաթեթավորող, ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆու փ. 111, Հայաստանի Հանրապետություն՝ բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, Հայաստան	օքսիմետազոլին (օքսիմետազոլինի հիդրոքլորիդ) oxymetazoline (oxymetazoline hydrochloride)	քթակաթիլներ 0,1մգ/մլ, 5մլ ապակե շշիկ	մլ	107,6	16140	150	ք. Գավառ Ազատության 21	150	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
27	33600000/330	բիսակոդիլ մոմիկ 10մգ	Լեկխիմ-Խարկով ԲԸ, 36, 17-րդ Պարտյեզդա փ., 61115 Խարկով Ուկրաինա	բիսակոդիլ bisacodyl	մոմիկներ ուղիղաղիքային10մգ	մոմիկ	49,6	14880	300	ք. Գավառ Ազատության 21	300	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
33	33600000/343	կոկարբոքսիլազա 50 մգ 2 մլ	Բիոֆարմա ՀԲԸ, 03680, Կիև, Ն. Ամոսովա փ. 9 Ուկրաինա	կոկարբոքսիլազ (կոկարբոքսիլազի հիդրոքլորիդ) cocarboxylase (cocarboxylase hydrochloride)	50մգ, ամպուլներ (3) և 2մլ լուծիչ ամպուլներում (3), ամպուլներ (5) և 2մլ	սրվ	170	34000	200	ք. Գավառ Ազատության 21	200	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում

					լուծիչ ամպուլներ ում (5)							
34	33600000/346	նիտրոգլիցերին 0,5մգ,	Տեխնոլոգ ՄԲԸ, Մանուիլսկոգո փ. 8, 20300 Ուման, Չերկասսի շրջան, Ուկրաինա	նիտրոգլիցերին nitroglycerin	դեղահատեր ենթալեզվային 0,5մգ	հաբ	7,78	311,2	40	ք. Գավառ Ազատության 21	40	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
38	33600000/351	ջուր ներարկման 2մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստա	ջուր ներարկման water for injection	լուծույթ ներարկման 2մլ ապակե սրվակ	ամպ	18,72	2808	150	ք. Գավառ Ազատության 21	150	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
39	33600000/354	Սուլֆոկամֆոկային 10% 2մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստա	սուլֆոկամֆորաթթու, պրոկայինի հիմք sulfocamphoric acid, procaine base	լուծույթ ներարկման 49,6մգ/մլ +50,4մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	ամպ	56,16	2808	50	ք. Գավառ Ազատության 21	50	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
40	33600000/355	Նեոսմեկտին փաթեթ 3գ	Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկ, Ագրեգատնայա 2դդ փ., 1ա/20, Ռուսաստան	դիոսմեկտիտ diosmectite	դեղափոշի ներքին ընդունման դեղախառույթի, նարնջի համով 3գ, փաթեթիկներ (10, 30)	փաթեթ	158	15800	100	ք. Գավառ Ազատության 21	100	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
43	33600000/358	Բալասանային նրբամածուկ (ըստ Վիշնևսկու) 25գ	«Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ, 64, Զապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան, Բելառուս	կեչու խեժ, քսերոֆորմ birch tar, xeroform	նրբամածուկ 30մգ/գ+30մգ/գ, 25գ ալյումինե պարկուճում	տյուբիկ	309,65	12386	40	ք. Գավառ Ազատության 21	40	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
44	33600000/362	օտիպաքս ականջի կաթիլներ 15մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմփանի Ս.Ռ.Լ. Ռումինիա	ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) phenazone, lidocaine (lidocaine	40մգ/գ+10մգ/գ, 5գ և 15գ պլաստիկե շշիկ	հատ	1071,69	32150,7	30	ք. Գավառ Ազատության 21	30	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում

				hydrochloride)								
46	33600000/364	կետոտիֆեն 1 մգ	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30 , Բելառուս	կետոտիֆեն (կետոտիֆենի ֆումարատ) ketotifen (ketotifen fumarate)	դեղահատեր 1մգ	հաբ	5,5	3300	600	ք. Գավառ Ազատության 21	600	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
48	33600000/368	կորվալոլ 22 ինկ 25մլ	ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկ, Ագրեգատնայա 2րդ փ., 1ա/18, Ռուսաստան	ալֆա-բրոմիզովալերիանաթթվի էթիլ էսթեր, ֆենոբարբիտալ, անանուխի յուղ ethyl ether alfa-bromisovalerianic acid, phenobarbital, oil menthae	կաթիլներ ներքին ընդունման 20մգ/մլ+18մգ/մլ+1,4 մգ/մլ+ 0,2մգ/մլ, 25մլ ապակե շշիկ	հատ	153,6	15360	100	ք. Գավառ Ազատության 21	100	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
50	33600000/371	Հեդելիքս /օշարակ/ 100մլ	Կրեվել Մոզելբախ ԳմբՀ, Կրեվել փ. 2, 53783 Էյտորֆ – բաց թողնման հսկող (դեղաձևն արտադրող, փաթեթավորող - Կրեվել Մոզելբախ ԳմբՀ, Քսավիեր Ֆորբրյուգեն փ. 6, 98708 Գեհրեն, Կրեվել, Գերմանիա), Գերմանիա	բաղեղ սովորական hedera helix	օշարակ 7մգ/մլ, 100մլ ապակե սրվակ և չափիչ բաժակ	հատ	1670	58450	35	ք. Գավառ Ազատության 21	35	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
51	33600000/372	ֆենիստիլ կաթիլ	Նովարտիս Քոնսումեր Հելթ Ս.Ա., դե Լ'ետրազ ճանապարհ, փոստային ինդեքս 269, 1260 Նիոն, Շվեյցարիա	դիմետինդեն (դիմետինդենի մալեատ) dimetindene (dimetindene maleate)	կաթիլներ ներքին ընդունման (լուծույթ) 1մգ/մլ, 20մլ ապակե շշիկ	հատ	2152	21520	10	ք. Գավառ Ազատության 21	10	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
52	336000000/335	գլիցերինի մոմիկ 1000մգ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանային 22,Հայաստան	գլիցերոլ glycerol	մոմիկներ ուղիղաղիքային 1000մգ	հատ	86	6020	70	ք. Գավառ Ազատության 21	70	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
54	33610000/307	Էսպումիզան L	Բեռլին-Քեմի ԱԳ (Մենարինի	սիմետիկոն	կիթ	մլ	58,764	17629,2	300	ք. Գավառ	300	Պատվիրատուի ներկայացրած

		կիթ 40մգ/մլ 30մլ	Գրուպ), Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին,Գերմանիա	simeticone	ներքին ընդունման 40մգ/մլ, 30մլ ապակե սրվակ-կաթոցիկ					Ազատության 21		պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
55	33611170/305	Դրոտավերին 20մգ/մլ 2մլ	"Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, 64/27, Զապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) prenoxdiazine (prenoxdiazine hydrochloride)	լուծույթ ներարկման 40մգ/2մլ, 2մլ ամպուլներ	սրվ	53	53000	1000	Ք. Գավառ Ազատության 21	1000	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
57	33611350/308	ասկորբինաթթու 5,0 5 %	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստան	ասկորբինաթթու ascorbic acid	լուծույթ ներարկման, 50մգ/մլ, 5մլ ամպուլներ (10) և 2մլ ամպուլներ,	սրվ	49,73	24865	500	Ք. Գավառ Ազատության 21	500	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
58	33611350/309	ասկորբինաթթու 2,0 5 %	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստան	ասկորբինաթթու ascorbic acid	լուծույթ ներարկման, 50մգ/մլ, 2մլ ամպուլներ (10) և 2մլ ամպուլներ,	սրվ	24,86	49720	2000	Ք. Գավառ Ազատության 21	2000	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
61	33612000/305	էնտերոլ 250մգ	Բիոկոդեքս,1 ավենյու Բլեզ Պասկալ,60000 Բեուվեյս, Ֆրանսիա	սակխարոմիցես բուլարդի լիոֆիլացված բջիջներ lyophilized cells of saccharomyces boulardii	դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 250մգ, փաթեթիկներ	փաթեթ	240	24000	100	Ք. Գավառ Ազատության 21	100	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
62	33612000/306	էնտերոլ 250մգ	Բիոկոդեքս,1 ավենյու Բլեզ Պասկալ,60000 Բեուվեյս, Ֆրանսիա	սակխարոմիցես բուլարդի լիոֆիլացված բջիջներ lyophilized cells of saccharomyces boulardii	դեղապատիճներ 250մգ	դեղապատիճ	235	70500	300	Ք. Գավառ Ազատության 21	300	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում

64	33621200/302	ֆերում լեկ 100մգ /2 մլ	Լեկ դ.դ, Վերովշկովա 57 փ., 1526 Լյուբլյանա, Սլովենիա	երկաթի (III) հիդրօքսիդի և պոլիմալտոզի համալիր iron (III) hydroxide with polymaltose complex	լուծույթ մ/մ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլներ	սրվ	570	142500	250	ք. Գավառ Ազատության 21	250	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
65	33621200/304	Ֆերում ԼԵԿ օշարակ 50մգ/5մլ, 100մլ	Սանդոզ Իլակ Սանայի վե Տիկարետ Ա.Ս., Ատաթուրկ Բուլվարի 9, Կադ նո. 1, 41400, Կոցաելի, Թուրքիա	երկաթի (III) հիդրօքսիդի և պոլիմալտոզի համալիր iron (III) hydroxide with polymaltose complex	օշրակ 50մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ	հատ	2300	9200	4	ք. Գավառ Ազատության 21	4	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
72	33622200/303	դիբազոլ 1% 5,0	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստա	բենդազոլ bendazol	լուծույթ մ/մ ներարկման 10մգ/մլ, 5մլ ամպուլներ	սրվ	37,39	26173	700	ք. Գավառ Ազատության 21	700	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում
80	33631290/307	իբուֆեն օշարակ 100մլ սիրոպ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանային 22, Հայաստան	իբուպրոֆեն ibuprofen	օշարակ 20մգ/մլ, 100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ	մլ	7,45	14900	2000	ք. Գավառ Ազատության 21	2000	Պատվիրատուի ներկայացրած պահանջց հետո 10օրացույցային օրվա ընթացքում

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք.Գավառ, Ազատության 21	ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ.2/2
<<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/6	ՀՀ 1570005065330100
ՀՀ 220085140329000,ՀԿՀՀ 08417304	ՀԿՀՀ 01222567
Էլ.փոստ:gavaribk@mail.ru	Էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Տնօրեն՝ Ա.Կարապետյան	Հեռ. (011)720620
	Գլխավոր տնօրեն Ա. Ասատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «12» 02.2018թ.**

,, ,,Նատալի Ֆարմ ՍՊԸ ,, -ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ասատուր Ասատրյանի/ նույնականացման քարտ՝ 007355209, տրված 010-ի կողմից 2016-03-09/
որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է « Գավառի Բժշկական Կենտրոն » ՓԲԸ-ի* (այսուհետ՝ Պատվիրատու)
պատվիրատուի անվանումը
կողմից
կազմակերպված՝ << ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5>> ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

,,Նատալի Ֆարմ,,ՍՊԸ
ընկերության անվանումը
ՀՀ,ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ընկերության հասցե
,,Ամերիաբանկ,,ՓԲԸ
ընկերության սպասարկող բանկը
Հ/Հ 1570005065330100
ընկերության բանկային հաշվեհամարը
ՀՎՀՀ 01222567
Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը
Տնօրեն՝ Ա.Ասատրյան
ընկերության տնօրենի անուն, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
** *լրացվում է մասնակցի կողմից*

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ ՝ Նատալի Ֆարմ ՝ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ 'Ամերիաբանկ' ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1570005065330100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01222567

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ « Գավառի Բժշկական Կենտրոն » ՓԲԸ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 08417304

10. Շահառուի բանկը՝ <<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>>

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ Հ/Հ 220085140329000

12.Գումարը թվերով և բառերով՝ 148 370/ մեկ հարյուր քառասունութ հազար երեք հարյուր յոթանասուն/

Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ Պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝N << ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-3>>

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Ստարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները ՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 11
«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «_____»_____ 20 թ.**

_____, ի դեմս Ընկերության տնօրեն _____
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ_____* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ _*ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5*___* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

_____
ընկերության անվանումը

_____
ընկերության հասցեն

_____
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

_____
ընկերության բանկային հաշվեհամարը

_____
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

_____
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[4] N** *(պայմանագրի կատարման ապահովում)*

*** լրացվում է մասնակցի կողմից*

[4] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝<<Գավառի բժշկական կենտրոն>>ՓԲԸ	
9. Շահառուի ՀՎՀՀ՝08417304	
10.Շահառուի բանկը՝<<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ	
11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/220085140329000	
12.Գումարը թվերով և բառերով՝	
13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ***ՀՀ դրամ/AMD***	
14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում* ***տուժանքի ձևով***	
15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/5	
16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	17. կից՝--- էջ
19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

Հ/Հ	<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի	Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը	Վավերապայմանի լրացման պահանջը	Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը

	վավերապայման ները	փաստաթղթում		
1	2	3	4	5
1.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս
2.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը
3.	վճարող	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:Լրացվում է վճարողի կողմից	լրացվում է վճարողի կողմից
4.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
5.	վճարողի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը	լրացվում է վճարողի կողմից
6.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու	լրացվում է վճարողի կողմից
7.	վճարողի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ	լրացվում է վճարողի կողմից
8.	շահառու	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով

9.	շահառուի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
10.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը)	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
11.	շահառուի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
12.	գումարը (թվերով և բառերով)	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը	լրացվում է վճարողի կողմից
13.	արժույթը (բառերով և կոդով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
14.	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
15.	պայմանագրի ծածկագիրը (համարը)	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը	լրացվում է վճարողի կողմից
16.	փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն)	լրացվում է շահառուի կողմից
17.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին	լրացվում է շահառուիկողմից
18.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական	ստորագրվում է վճարողի կողմից

			կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:	
18.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է վճարողի կողմից
19.ա.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս	ստորագրվում է շահառուի կողմից
19.բ.	շահառուի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է շահառուի կողմից
20.ա.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր	
20.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	չի լրացվում	
21.ա.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
21.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
22.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը,	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, որպեն	

	որպեն			